

## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Confidential

Ummi Suri Suttip

891.99
72-71



ԿԱՅԵԼ ՀԱՐՈՒԹԵԼԻ  
ՍԱՍՏԱ ԽԱԵՐ



891.99  
P-71

1925

6 NOV

891.99  
P-71

48

ՎԱՀԱՆ ԹՈԹՈՎԻՆՑ

ՍԱՄՄԱ

ԾՈԵՐ

(ԴՐԱՄԱ)

1001  
1564



1357

ՏԵՐԵՎՈՐ

1925

## Ա Ն Զ Ե Ր Ը

- 1. Թափիր**
- 2. Զենով Ռիան**
- 3. Սառիեն**
- 4. Թորոս**
- 5. Սուլբ**
- 6. Թոմաս**
- 7. Սմբատ**
- 8. Մարտ Մելիք**
- 9. Կողբագին**
- 10. Զարխաչին**
- 11. Ս. Երանակ**
- 12. Ավիս**
- 13. Ասո**
- 14. Վազո**
- 15. Ալեվոր**

Կանայք, հարսներ, աղջիկներ, զինվորներ, ծոեր, բաղրադ-  
ներ յեզ պարունիներ:

---

Բեմագրության բոլոր իրավունքները վերապահված  
են հեղինակին

---

## ՊՐՈԼՈԳ

Ասում են՝  
Հին հին ժամանակ  
Աշխարհին Սասմա  
Տիրել ե մի լիբը արքա  
—Մելիքը Մսրա:  
Սասմա աշխարհում  
Հին ժամանակում  
Յեղել ե մի  
Աժդահա մանուկ,  
Անունը Դավիթ,  
Ժայռի պես կոպիտ:  
Պատմում են մեր  
Միամիտ հայրեր,  
Վոր Դավիթ մենակ,  
Հին հին ժամանակ,  
Կը զնա  
Ինչպես աժդահա  
Դեմք զորքերի  
Մսրա արքայի:  
Մի որում  
Ու մի գիշերում  
Զորքը արքայի  
Կանցկացնի սրի,  
Ու հպարտ, արի,  
Տերը կը դառնա  
Սարերին Սասմա:  
Սա մի հեքիաթ ե  
Ծածկված մշուշե

## ՊՐՈԼՈԳ

Ասում են՝  
Հին հին ժամանակ  
Աշխարհին Սասմա  
Տիրել ե մի լիբք արքա  
—Մելիքը Մարա:  
Սասմա աշխարհում  
Հին ժամանակում  
Ցեղել ե մի  
Աժդանա մանուկ,  
Ասունը Դավիթ,  
Ժայռի պես կոպիտ:  
Պատմում են մեր  
Միամիտ հայրեր,  
Վոր Դավիթ մենակ,  
Հին հին ժամանակ,  
Կը գնա  
Ինչպես աժդանա  
Դեմը զորքերի  
Մարա արքայի:  
Մի որում  
Ու մի գիշերում  
Զորքը արքայի  
Կանցկացնի սրի,  
Ու հպարտ, արի,  
Տերը կը դառնա  
Սարերին Սասմա:  
Սա մի հեքիաթ ե  
Ծածկված մշուշե

Մթին քողերով:  
Ի՞նչպես թե մի մարդ  
— Հարց կը տանը հիմի—  
Են ել մեն մենակ,  
Ինչքա՞ն աժդահա  
Ինչքա՞ն ել անահ,  
Մի ծիռվ,  
Մի սրով,  
Մի սրոտվ  
Գնա կոտորի  
Զորքը արքայի  
Ու հաղթի:  
Սա մի հերիաթ ե,  
Ծածկված մշուշ  
Մթին քողերով:  
Պատում ենք ահա  
Այդ առասպելի  
Վարագույրը մութ  
Մեր մեծ որերի  
Սրերով անզութ:

## ԱՌԱՋԻՆ ՊԱՏԿԵՐ

Մի շինագան ազնվականի տան բակը: Հավեր յեվ ուրիշ կենդանիներ: Բակի խորքում տան մեծ դուռը: Բակի պատի տակ ոզախ և վառվում, վորի վրա մեծ պղինձով ջուր և տարանում: Ազ կողմից բակի դուռը, վոր տանում և փողոց: Դոնից քիչ վեր տարածվում ե մի փոքրիկ խրճիթի կտուր: Տեսարանը շրջապատված ե ցից ու սեվ սարերով:

**Սառիեն.** — Քըշ... քըշ... քշա... քշա... (հավերին և քշում):  
**Զենով Ռիան.** — (Բակի դոնից ներս) Մարկոսի աղջիկ, բեզարեցի, ոֆ...

**Սառիեն.** — Ի՞նչի՞ց:

**Զենով Ռիան.** — Ծուռ Դավթից:

**Սառիեն.** — Ի՞նչ ե: Ի՞նչ կա:

**Զենով Ռիան.** — Յերեկոները սարից քաղաք մտնելիս՝ ըտղքցիք դուռ չեն բաց անում:

**Սառիեն.** — Ի՞նչու: Քըշ... քըշ... քըշա... քըշա...

**Զենով Ռիան.** — Վախենում են:

**Սառիեն.** — Ի՞նչու են վախենում:

**Զենով Ռիան.** — Ի՞նչպես չվախենան, բան ես ասում: Գելեր, լապրատակներ, ել ի՞նչ իմանամ, քանի տեսակ ջանավարներ և խառնում նախրին, բերում լցնում մեջ քաղքին:

**Սառիեն.** — Ի՞նչ ասեմ. դռւ ել ես վախեցել:

**Զենով Ռիան.** — Խոսում ես ելի: Տալիս ես գլխիցդ դուրս...

**Սառիեն.** — Վահ վոք լեզուն գուրս չհանի ու ասի Դավթին, թե աչքիդ վրա հոնք կա, համ...

**Զենով Ռիան.** — Դու ի՞նչ յեղար, այ կնիկ: Ենպես ես խռում հենց իմանաս Դավթը քո մեջքիցդ ե ընկել:

**Սառիեն.** — Զես ամաչում: Մհերը վոր մեռավ մեղ չհանձնեց Դավթին:

**Զենով Ռիան.** — Եղպես ե: (Մտածելով) Խո յես վատ բան չեմ տառում: Այ կնիկ, զու վոր իմ վրա հղպես հարձակվում ես, եղ կարճ լեզուդ յերկարում ես՝ յես ի՞նչ եմ ասում....

**Սառիեն.** — Դավիթը ծուռ է: Պրծմավ:

**Զենով Ոհան.** — Յես նրան գառնարած արի. հասկանո՞ւմ ես, յես նրան գառների հետ սարն ուղարկեցի, յես պետք է պատասխան տամ խալսին:

**Սառիեն.** — Զենոներդ լվան ու գուրս արի միջից: Բո բնչ բանն է: **Զենով Ոհան.** — Վոր ասում են կնանիքը եսպես-ենպես, մեկ-մեկ չենք հավատում: Կիս ես ստեղծվել ու խելքդ պակաս ե... (Բակի դոնից դուրս ե զնում):

**Սառիեն.** — Հողեմ յես բոլորի գլուխը: Քըշ, քըշ քշա, քշա, քշա... (Զենով քննում ե պղնձի զուրը) Զուրը տաքացել է: Դաշ վիթն ուր ե ուր չե՛ հիմի կգա:

**Զայներ.** — (Դրսից) Փախեք, փախեք, փախեք... Այ տղա, փախեք: Գելերն յեկան, Փակեցեք դոները: Ծուռ Դավիթն յեկավ...

**Մի կանացի ձայն.** — (Դրսից) Յերեխես, յերեխես: Վայ Դավիթ, չորանոս:

**Դավիթ.** — (Դրսից, ահավոր ձայնով) Հեյ, եհեյ... տավարը յեկավ, ներս առեք, թե չե, եգուց տեր չեք ըլի, հա՛...

**Սառիեն.** — (Բաց աներով դուռը, ուրախությամբ մազերի հյուս-կեններն ե քանդում):

**Մի ձայն.** — (Դրսից) Տավարը քեզ, ծնուռ Դավիթ, տավարը քեզ ըլի: Եղ գելերը մի բերի սարից քաղաք:

**Դավիթ.** — (Դրսից) Ի՞նչ եք զուրս տալի: Քեզի բան չի: Եսպես և ուզում Դավիթի քեֆը: Ի՞նչ եք գովացնում:

**Սառիեն.** — Արի, մտադղ: Եղ վախկոտներին պատասխան ես տալիս:

**Դավիթ.** — (Մի բանի հատ վոչխար, զայլ յեզ աղվես ներս ե ըրշում) Բար աշողում, հրողբեր կնիկ:

**Սառիեն.** — Բարով յեկար, մատադղ:

**Դավիթ.** — Ես լակոտ լուկուտները վոր խոսում են՝ շատ ե ջիզը գալիս, հրողբեր կնիկ: Մին մին ասում եմ մտքումս սարից հավքեմ բոլոր առյուծներին ու վագրերին ել՝ բերեմ լցնեմ, սոված-սոված՝ մեջ քաղքին:

**Սառիեն.** — Բոլորը մեկանց լեղաճաք կըլեն, մատադղ, ի՞նչ ես ասում:

**Դավիթ.** — (Նստերով մի քարի վրա) Դաղբել եմ, հրողբեր կնիկ, շատ եմ դաղըել: Են սկ ուլերը շատ անիծած են: Հոգիս դուրս եկավ, հրողբեր կնիկ:

**Սառիեն.** — Են սկ ուլերին մորթի ու կեր:

**Դավիթ.** — Զե, ի՞նչ ես ասում, հրողբեր կնիկ: Ուրիշի ունեցածը ինձ համար հարամ է:

**Սառիեն.** — Բան չունեմ:

**Դավիթ.** — Զե, հրողբեր կնիկ, չե,  
(Լուսթյուն)

**Սառիեն.** — Դավիթ ջան, սոված ես:

**Դավիթ.** — Զե, հրողբեր կնիկ, քսանինս թաս եծի կաթ եմ խըմիլ:

(Լուսթյուն)

**Սառիեն.** — Եսոր հրողբերդ վրադ գանգատ եր անում:

**Դավիթ.** — (Յերկաթե ցուպը զարնելով զետին) Գանգատ եր անում: Ի՞նչ եր ասում:

**Սառիեն.** — Ի՞նչ իմանամ: Ասում եր ելի՛: Ասում եր՝ քաղքցիք վախենում են: Սարից գելեր ու լապստրակներ են բերում, լցնում են մեջ քաղքին:

**Դավիթ.** — Ե, լավ: Ի՞նչ ե ասում:

**Սառիեն.** — Ասում ե... ասում ե, Դավիթը ծուռ ե:

**Դավիթ.** — Դավիթը ծուռ ե: Վերջը:

**Սառիեն.** — Վերջը ի՞նչ: Մի բան ել: Յես ասի, վոր Դավիթի թելին վոչ վոք չգիպչի:

**Դավիթ.** — Լավ ե հրողբերը իր հոգսը քաշի: Հարկանավաքներ ե ուզարկել ժողովրդի մեջ: Իմաննում ես զուրսը ի՞նչ դիմաթ ե: Ժողովուրդը չի ուզում հարկ տա: Ի՞նչու պետք ե տա:

**Սառիեն.** — Մարիկ մի տա: Բո ի՞նչ գործն ե (Հավերին ե քշում):

**Դավիթ.** — Վո՞նց թե իմ ի՞նչ գործն ե: Յես ել ժողովուրդ եմ: Յես ել զորը եմ:

**Սառիեն.** — Բեկանից հարկ չեն ուզի, մատադղ:

**Դավիթ.** — Ի՞նձնից չեն ուզի, համա ընկերներիցս ուզում են: Հրողբերը հենց են ե՝ կըակի հետ ե խաղ անում:

(Լուսթյուն)

**Սառիեն.** — Դավիթ ջան, մատադղ քեզ մի բան ասեմ՝ չես նեղանա:

**Դավիթ.** — Զե, հրողբեր կնիկ, ի՞նչի՞ նեղանամ:

**Սառիեն.** — Են ե՝ ջուրը տաքացել ե, մեկը չկա, վոր ջուր ածի, գլուխս լվամ: Դու... զու... դու... կանեմ:

**Դավիթ.** — Ի՞նչու... չե, հրողբեր կնիկ. դու իմ մերն ես, յես ել քո վորդին եմ:

**Սառիեն.**—Մատաղ եմ քո հոգուն: Դավիթ ջան:

(Մազերի հյուսկենները բանդած յեվ թափած ուսն ի վար՝ գնում բերում ե մեծ տաշտը յեվ դնում ե բակի մեջանդը)

— Դավիթ ջան, ոգնիր ինձ տաք ջուրը բերեմ եստեղ:

**Դավիր.**—(Գնում ե բռնում պղնձի յերկու ունկերից յեվ բերում ե տաշտի մոտ):

**Սառիեն.**—(Սկսում ե շորերը ուսերից վար շիխել, այնպես վոր բացփում են նրա կոները յեվ կրծքի խոշորագույն մասը):

**Դավիր.**—(Ապշած դիտում ե, ապա յերեսը շուռ ե տալիս չտեսնելու համար):

**Սառիեն.**—(Անաջող պճրանքով) Դավիթ, մատաղ, կնկա ջան տեսէ, ես:

**Դավիր.**—(Առանց շուռ գալու) Հրովեր կնիկ գլուխդ պիտի լվաս, լվա ելի...

**Սառիեն.**—Ախր երեսդ ես կողմը շուռ տուր, գլուխս տեսնես:

**Դավիր.**—(Միամտությամբ շուռ ե տալիս յերեսը յեվ ամաչելով վերցնում ե թասը, ջուր առնում յեվ ելի շուռ տալիս յերեսը) Գու գլուխդ տաշտի վրա կուացրու, յես կը լցնեմ, հրովեր կնիկ:

**Սառիեն.**—Ե, լավ, լցրու (Կոանում ե):

**Դավիր.**—(Լցնում ե ջուրը առանց նայելու յեվ յերեմն յերեմն ջուրը թափում ե զետնին կամ Եառիենի թիկունին) Հրովեր կնիկ:

**Սառիեն.**—Ի՞նչ ե, մատաղ:

**Դավիր.**—Զպրծավ (լցնում ե ջուրը):

**Սառիեն.**—Հիմի, հիմի... Ախր մեջքս ջորտեցիր: Ես կողմն աշի:

**Դավիր.**—(Սրտնեղած) Դե, պրծի, հրովեր կնիկ:

**Սառիեն.**—Ես ե, պրծավ, հա:

**Դավիր.**—(Թասը դնելով զետնին, առանց Սառիենին նայելու հեռանում ե յեվ նստում բարի վրա, յերեսը շուռ տված):

**Սառիեն.**—(Սրբելով, չորացնելով մազերը) Դավիթ ջան, ի՞նչ յես յերեսդ շուռ տվել: Թամաշա արա ելի: (Կուրծքն ե սլրում):

**Դավիր.**—Ախր, հրովեր կնիկ, գու իմ մերս ես, յես ել քո վորդին եմ:

**Սառիեն.**—Եղ իսպիի համար ե, հոգուդ մատաղ: Խո յես քո հարացատ մերը չեմ:

**Դավիր.**—(Ապշում ե):

**Սառիեն.**—(Մոտենալով նրան՝ փորձում ե գլուխը շոյել):

**Դավիր.**—(Ընդոստ վեր բարձրանալով) Թնդ ինձ: Ամոթ ե:

**Ս ռ ի ե ն.**—Մի բարկանա, հոգուդ մատաղ: Ախր յես կինարմատ եմ: Յու ել խորոտ տղա յես: Ինչիք յես բարկանում:

**Դավիր.**—Ամոթ ե, ամոթ, հրովեր կնիկ: Յես քո վորդին եմ:

**Սառիեն.**—Դու իմ խորոտն ես:

**Դավիր.**—(Գնում ե բակի դռնից դուրս):

**Սառիեն.**—(Զարացած) Շնւն, եղքան քո կողմը տաշեմ, վոր ինձ եղ խոսքերը կանչես: Յես քեզ կտվորեցնեմ, շնւն Դավիթ:

Յես նրան պահեմ, մեծացնեմ, վոր ինձ ես որին հասցնի:

(Չուրը թափելով տաշտից՝ տանում դնում ե ելի իր տեղը: Պղինձը դնում ե ելի կրակի վրա յեվ ջուր ածում մեջը):

Մարզս վոր ինձ թողնի ու գնա՝ եղպես շները կհաջեն ինձ վրա:

**Ա ն ք ա ռ ա մ.**—(Գալիս նստում ե կտրի ծերին ու իլիկ ե մանում)

**Ս ա ռ ի ե ն.**—(Սարսափելի չարացած) Լակոտ, լակոտ, մի մոռանա: Եղ քեզ չեմ ուտացնի: (Գնում ե ներս):

**Զ ե ն ո վ Ո հ ա ն.**—(Ներս ե մտնում: Յետելից մտնում են թումաւ Սուրո, Սմբատ) Համեցեք, համեցեք, համեցեք: (Նստում են ծառի տակը դրված թափաների վրա):

**Թ ո ւ մ ա ս.**—Հարկանավագներին ուղարկեցինք հարկերը հավաքելու, աղա Ոհան: Մունետիկ կանչել տվինք, թե Մորա Մելիքի գեսպան կողբաղինը կգա, պետք ե հետը ոխու տարվա խարջը: ու սիրուն աղջկերը և հարսներ տանի:

**Զ ե ն ո վ Ո հ ա ն.**—Հավ եք արել:

**Թ ո ւ մ ա ս.**—Լավ լավ ե, աղա Ոհան, համա ժողովուրդի մեջ դաւ մաղալ ե:

**Զ ե ն ո վ Ո հ ա ն.**—Ի՞նչ զալմաղալ:

**Թ ո ւ մ ա ս.**—Ասում են հարկ չենք տա:

**Զ ե ն ո վ Ո հ ա ն.**—Շատ ել տառմ են: Ո՞վ ե մտիկ տվողը: Մեր

պարտքն ե, պետք ե տանիք: Հա, ես եյի տառմ: Զընի թե սիրուն աղջիկներին թագցնեն մագցնեն: Թագավոր ե՝ ու զածը պետք ե անի: Որենք ե: Եղ որենքը մենք չենք դրել: Մենք ել չենք կարող փոխել:

**Մ մ բ ա ս.**—Ի՞նչ արած...

**Թ ո ւ մ ա ս.**—Ախր մեր Սառմա դժերին դու լավ ես ձանաշում:

**Զ ե ն ո վ Ո հ ա ն.**—Ճանաչում եմ, զրա համար ել տառմ եմ:

**Թ ո ւ մ ա ս.**—Դու յես իմանում:

**Զենով Ոհան.**—Եղ գժերի հետ խոսելը ինձ թողեք: Գլխները կը թոցնեմ:

**Սուբո.**—Իե վոր դու պատասխան կտաս, աղա Ռհան, ինչպես առեա՝ ենպես ել կանենք:

**Զենով Ոհան.**—Հա: Յես պատասխան կտամ: Թող մունկտիկները կանչեն Սասմա քաղքում ու Սասմա քաղքի բոլոր մեծերն ու պատիկները լսեն, վոր արքայի դեսպանին հարգանքն ու պատիվը պետք ե անպակաս անեն: Վերն Աստված, վարը Մարտ թագավորի շվաքը, թող իմանան:

**Թումաս.**—Անպակաս լինի Աստծո ու թագավորի շվաքը մեր վրայից:

**Սմբատ.**—Անպակաս լինի:

**Սուբո.**—Ես ել բաղդ ե, վոր վոսկով ու կնանիքով զոհ կըլի:

**Զենով Ոհան.**—Մհերը վոր վոզդ լիներ՝ եսպես չեր լինի: Սուբոն լավ ասաց: Քանի Մհերը չկա՝ ես ել բաղդ ե (Լոռություն): Եգուց, առավոտյան ծեղին, թոմաս, խալիչեք փոել կտաս քաղքի ծերին, վոր առաջի անգամ կողբագինը խալիչեքի վրա վատը զնի: Ամեն մեկդ ել մի մի վոսկե նվեր կը բերեք: Պատվիրեցեք ժողովորին, վոր գիմավորեն արքայի դեսպանին:

**Բոլորը.**—Մեր զլիի վրա:

**Զենով Ոհան.**—(Ինքնիրեն) Այ գիշի Մհեր, զլուխդ մի վեր վերցրու:

(Լոռություն)

**Սուբո.**—Մին ել, աղա Ռհան, ուրիշ բան: Մի ճար արա, եղ ծըռին մի խոսք հասկացրու: Ի՞նչ ե զելերին ու լապստրակներին քաշ առիս, բերում լցնում մեջ քաղքին:

**Զենով Ոհան.**—Դուք եք ծուռ ասում ու ասում եք ծուռը շտկի:

**Թումաս.**—Մենք ծուռ շտկելը չենք իմանում: Համա թե զու մեր վզն փաթաթեցիր եղ ծուռը, մարդիկ չիմանան՝ խո Աստված կիմանա, աղա Ռհան:

**Զենով Ոհան.**—Դրուստ եք ասում:

**Սուբո.**—Մի ճար արա ախր: Եղակես չի լինի:

**Սմբատ.**—Մի ճար արա, թե չե կիմինք, լեշը կիմինք Սասմա քաղքում:

**Զենով Ոհան.**—(Չարացած) Խիմք... ում եք խփում: Ասյուծ Մհերի կորյանին: Են առյուծը, վոր քառասուն տարի իշ-

լեց Սասմա վրա ու դուք ու ձեր վորդիքը ապրեցիք ու ստարի գերի չգացիք... Ում եք խփում: Ի՞նչեր եմ լուսուժ Թումաս.—Ականչ մի կախի մեր Սմբատին: Մի բան եր ասաց:

**Զենով Ոհան.**—Մի բան եր ասաց... ի՞նչպես թե մի մարդ մի բան ասի ու եղպես իշու խոսք գուրս տա:

**Սմբատ.**—(Զզումի արտահայտությամբ) Ախր, աղա Ռհան, Մըները մեզ պաշտպանում եր: Ես ծուռը մեզ գելերի բերանն ե ատլիս:

**Զենով Ոհան.**—Երեխա յի: Ես մեկը լավ իմացի:

**Սուբո.**—Մձրատի ասածը մեծ պատիկություն եր, աղա Ռհան, ներին: Մեր թոռների թոռները չեն մոռանա Ասյուծ Մհերին:

**Զենով Ոհան.**—Կմոռանան, շուտ կը մոռանան: Այ Մհեր, ուր ես: Մի ձենդ հանի: (Լոռություն) Գնացեք, կավ կատարեցիք իմ պատվերները:

**Բոլորը.**—(Լոռու հնաւնում են):

**Զենով Ոհան.**—(Մնում ե մենակ, չարացած ու մտախոն):

**Սառիեն.**—(Մտնում ե խորքի դռնից արագ քալերով): Հոր: Ի՞նչ եյին ասում:

**Զենով Ոհան.**—Ինչ պիտի ասեն. Ելի եկել են մեր ծուռ Դավթից գանդատ:

**Սառիեն.**—Իրավունք ունեն:

**Զենով Ոհան.**—Բահար... եղ զու յիս ասում:

**Սառիեն.**—Յես եմ ասում, յիս:

**Զենով Ոհան.**—Վժնց թե...

**Սառիեն.**—Թող խփին: Շան սատակ անեն լակոտին:

**Զենով Ոհան.**—Բահար... Բահար...

**Սառիեն.**—Ինչի՞ յիս զարմանում:

**Զենով Ոհան.**—Վժնց չզարմանամ: Զես հասկանում:

**Սառիեն.**—Զես հասկանում: Ասում եմ՝ թող շան սատակ անեն լակոտին:

**Զենով Ոհան.**—Լեզուդ, լեզուդ:

**Սառիեն.**—Դու ինձ համար վորդի՞ իս բերել թե, սիրող ես քեր:

**Զենով Ոհան.**—Ի՞նչ ես գուրս տալիս, այ կնիկ:

**Սառիեն.**—Դու եղ լակոտին ուտացնես, խմացնես, վոր վեր կե-

**Զենով Ոհան.**—Ի՞նչ ես ասում: Ի՞նչ ես հաջում, Մարկոսի աղջիկ:

**Սառիեն.**—Յես քիչ եմ ասում, դու շատ հասկացի: Յես իմանում  
թե տանդ ինչ զե ես պահում:

**Զենով Սիան.**—Սուտ ես ասում:

**Սառիեն.**—(Կեղծ լացով) Խո յես եյի, վոր եղ լակոտին պաշտ-  
պանում եյի: Յես եմ սուտ խոսնեմ: Սուտ խոսողը կրակն  
ընկնի:

**Զենով Ոհան** (Մտածելով յեվ մի քիչ դադարելուց հետո) **Այ**  
կնիկ (Մոտենալով ու շոյելով նրա մազերը) Յես նրան  
դուքս կվոնդեմ տնից ու ել չեմ պահի:

**Սառիեն.**—(Ուրախացած յեվ արցունքները սրբելով): Մի պահի,  
վոր յես չմեղավորնամ:

**Զենով Ոհան.**—Յես նրան կվոնդեմ:

**Սառիեն.**—Դուռը դնեմ, վոր չկարողանա ներս մտնի:

**Զենով Ոհան.**—Են ծուռը մի քացիով կջարդի դուռը: Յես նրան  
խոսքով կվոնդեմ:

**Սառիեն.**—Զե, չե: Դնեմ գուռը (Փակում ե դուռը):

**Զենով Ոհան.**—Այ կնիկ, ափսոս չեր, վոր մեր քաղքցոց հետ եղ  
լակոտի համար կովեցի:

**Սառիեն.**—Ափսոս, հազար ափսոս:

**Զենով Ոհան.**—Հիմի յես վանդեմ նրան, քաղքցիք ինչ ուզում  
են՝ թող անեն: Իմ բանը չի:

**Սառիեն.**—Թո ինչ բանն ե: Ծոփ հետ թող ծուռ վարվեն:

**Զենով Ոհան.**—Դրուտ ես կնիկ, զրուտ ես:

**Դավիթ.**—(Դրսից ահավոր ձայնով) Քեփս վոնց վոր ուզի՞ են-  
պիս ել կանեմ: Ով վոր ուզում ե տավարն ինձ չտալ՝ թող  
չտա:

**Զենով Ոհան.**—Հիմի կը սովորացնեմ են ծոխն: Թող ընկնի  
քուչեքը, տեսնեմ վճնց հաց կը ճարի:

**Սառիեն.**—Յես գնամ ներս: Յերեսը չտեսնեմ: (Անապարում ե  
ներս):

**Դավիթ.**—(Յերեցնում ե դուռը, չի բացվում):

**Զենով Ոհան.**—Դավիթ: Դժև յես:

**Դավիթ.**—(Դրսից) Յես եմ, հրողբեր:

**Զենով Ոհան.**—Դավիթ (Տատանվելով) Դժև ես:

**Դավիթ.**—(Դրսից) Յես եմ, հրողբեր: Դուռը ինչի՞ ես դրել:

**Զենով Ոհան.**—Դավիթ:

**Դավիթ.**—(Չայրացած) Յես եմ, ասա:

**Զենով Ոհան.**—Դավիթ, դու մեր տանը ել դործ չունես: Դու  
մեր տան վորդին չես:

**Դավիթ.**—(Դրսից զոռոցով) Ինչի՞:

**Զենով Ոհան.**—Մարկոսի աղջիկը ինձ ամեն բան պատմեց: Ա-  
մոթ քեզ:

**Դավիթ.**—(Մի բացի տալով ջարդում ե դուռը ու մտնում ներս):

Ամոթը քեզ, հրողբեր, վոր կնամարդու յես հավատում:

**Զենով Ոհան.**—Մարկոսի աղջիկը սուտ չի ասի: Դու նրա կը ծ-  
քին ձեռ ես տվել:

**Դավիթ.**—(Բավկական մտածելուց հետո) Հիմի սատանան կասի  
մի քացի տամ, քեզ ել, տունդ ել, կնիկդ ել նետեմ գետնի  
տակի անգունդը, համա ինչ արած, հրողբեր, բողու խա-  
րած ես:

**Զենով Ոհան.**—Լոիր, շուն:

**Սառիեն.**—(Յերեվում ե տան դռան շեմքին, ցինիկ ուրախու-  
թյամբ):

**Դավիթ.**—Բոզու խաբած ես, հրողբեր:

**Զենով Ոհան.**—Ոձ եմ պահել իմ տանը: (Գնում ե դուրս):

**Սառիեն.**—Դուրս գնա մեր տնից: Եստեղ ինչ բան ունես:

**Դավիթ.**—(Չայրացած ու լուռ):

**Ս. Երանամ.**—(Կտրից) Դժև ինչ բանի յես, Սառիեն խանում: Ես  
տունը Դավթինն ե: Յեկել նստել ես, կարծում ես՝ յեղավ:

**Սառիեն.**—Զենդ կտրի, քաֆթառ: (Դավթին) Դուրս մեր տնից:

**Դավիթ.**—(Դերագույն զայրույթով աչքերը հառում ե Սառիենին):

**Սառիեն.**—Դուրս (գնում ե ներս):

**Ս. Երանամ.**—Հողեմ ես քո զուխը:

**Դավիթ.**—Բան մի ասա, նանի ջան: Յես նրան կը սովորացնեմ:

**Ս. Երանամ.**—Զասեմ, կը տրաքվեմ, Դավիթ ջան: Ես հարստու-  
թյունն ունի ե, իսկի չես հարցնում:

**Դավիթ.**—Հողղբորս ե, ինչ հարցնեմ:

**Ս. Երանամ.**—Հողեմ յես նրա զուխը: Ախր չես հարցնում թե  
դու ում տղեն ես, քո հերը ով եր, ինչ եր:

**Դավիթ.**—(Խորը թախծոտ) Յես վորք եմ, նանի ջան:

**Ս. Երանամ.**—Դու վորք ես... Ախր վորբն են ե, վոր իր հերը  
իրան վոչինչ չի թողնի մեռնելուց հետո:

**Դավիթ.**—Ե՛ս, հերս ել անիծած:

**Ս. Երանամ.**—Մեղա ասա, Դավիթ ջան, հն հերս անիծած: Ի՞նչ  
ես ասում: Յերեխս յես, չես իմանում:

**Դավիթ.**—Բաս ինչ, նանի ջան: Ո՞վ իմանա՞ իս հերը վողջ մ-  
ներ՝ ելի հսպես եյի լինելու:

**Անքառամ.** — Քո հերը վողջ լիներ... քո հերը վողջ լիներ չիմի  
իշխան եյիր դու, Դավիթ ջան:

**Դավիր.** — (Թախծոտ ծիծաղով) Իշխան, չե, թագավոր: Մի վո-  
տիս մտիկ, մի հազիս մտիկ: Սոլիր չունեմ, նանի ջան,  
վոտներս քարերի ու փշերի հետ կոիվ են անում: Ասում  
ես իշխան...:

**Անքառամ.** — Իշխան, բաս, չիմի քեզ պատմեմ, դու ինքդ դատիր:  
Դավիր. — (Գլուխը կախ գետին ե նայում):

**Անքառամ.** — Քո հերը, Դավիթ ջան, վողջ Սասմա աշխարքի իշ-  
խող Մհերն եր: Ենքան քաջ եր, զոր Առյուծ Մհեր եյին  
ասում նրան, Նրա անունն ու հարստությունն աշխարքից  
աշխարք եր անցել: Քո հերը քառասուն տարի իշխեց: Նրա  
որով սկ թռչուն չանցկացավ մեր սարերով:

**Դավիր.** — (Գլուխը բարձրացնելով) Ասա, նանի ջան, տսա:  
**Անքառամ.** — Դու Առյուծի տղեն ես, Դավիթ ջան: Քո հերը իր  
բոլոր թագավորությունն ու հարստությունը քեզ կտակեց:  
Դու յերեխա եյիր, դրա համար քո հրողբորը հանձնեց եղ  
բոլորը: Չիմի ուզում ե քեզ դուրս հանի, մենակ ուտի վոս-  
կին ու արծաթը, եղ բոլորը քոնն ե, Դավիթ ջան:

**Դավիր.** — (Կարծես յերազում) Իմ հերը ես սարերի իշխան...  
**Անքառամ.** — Բաս, բալա ջան, քառասուն, տարի, քառասուն հա-  
զար տուն եր կերակրում:

**Դավիր.** — (Վոտը խիմելով գետին) Պատմի, նանի ջան, պատմի:  
**Անքառամ.** — Ել ինչ պատմեմ: Դու գնում ես, մտնում ես ուրիշ-  
ների ցանքս ու նրանց տունն ես քանդում: Բոնի հրող-  
բորդ, ուզի քո հարստությունը:

**Դավիր.** — (Վառվում են աչքերը) Նանի, իմ հրողբոր հարստու-  
թյունը իմն ե, հա:

**Անքառամ.** — Քոնն ե, բալա ջան, հենց քոնը: Են բաշան նստել  
ուտում ե ու դու եղախ անտրեխ ման ես գալիս:

**Դավիր.** — Յես շանց կտամ նրան:

**Անքառամ.** — Հա, են եյի ասում... Կողբագինը եկուց գալիս ե:  
**Դավիր.** — Իմանում եմ: Նրա համար հարկ են հավաքում: Համտ  
ժողովուրդը չի տա:

**Անքառամ.** — Կողբագինը գիտես ինչ մարդ ե:

**Դավիր.** — Զեմ իմանում: Ասում են գահիճ ե:

**Անքառամ.** — Կողբագինը Մորա Մելքքի իշխն ե: Քո հոր մեռ-  
նելուց հետո Մորա Մելքքը յեկավ, տիրեց ես սարերին ու

մեզ, թագավոր դառավ: Հիմի Մորա Մելքքը իր եղին ե  
ուզարկել, զոր ոխտը տարգա խարջը տանի, հավքի մեր  
շարուածիկ աղջկերանց ու Հարսներին ու տանի Մորա Մե-  
լքքի պալատումը բոզ գարձնի:

**Դավիր.** — Ոխտը տարգա խարջ ու մեր աղջկերանց...

**Անքառամ.** — Բաս, բալա ջան, ժողովուրդը հարկ ել չտա, քո հոր  
հարստությունը տեղն ե: Հողեմ յես Զենով Ոհանի գլուխը,  
վախիցը բոլ բոլ կը չափի ու կտա:

**Դավիր.** — Ալի, նանի ջան, հիմի կը տրաքվեմ:

**Անքառամ.** — Տրաքվելու բան ե, Դավիթ ջան:

**Դավիր.** — Կողբագինը...

**Անքառամ.** — Բաս, Կողբագինը:

**Դավիր.** — Իմաննեմ ես գուրսը ինչ զիսմաթ ե:

**Անքառամ.** — Եգուց բոլոր մեծատուները և Սասմա վողջ ժողո-  
վուրդը պիսի զնան զիմավորեն Կողբագինին:

**Դավիր.** — Ժողովուրդը փող չի տա: Ում փողը պետք ե տան  
Կողբագինին:

**Անքառամ.** — Քո փողը, բալա ջան, հենց քո՞ փողը:

**Դավիր.** — (Խոր լրությունից հետո) Նանի ջան:

**Անքառամ.** — Ասա, մատազ:

**Դավիր.** — Մի բան պետք ե խնդրեմ քեզանից, նանի ջան:

**Անքառամ.** — Մի բան կտամ, ասա:

**Դավիր.** — Նանի ջան, ուզում եմ յերեամ Կողբագինին ու շանց  
տամ նրան թե՛ վրատեղից ե զալիս:

**Անքառամ.** — Լավ: Դնա:

**Դավիր.** — Նանի ջան, նետ ու աղեղ ունեմ, միայն եշ չունեմ,  
եշ տաս հեծնեմ:

**Անքառամ.** — Ե՞շ: Ինչ ես անելու եշը: Դու Առյուծի վորդի, Բշ  
հեծնես:

**Դավիր.** — Բաս վոնց անեմ, նանի ջան:

**Անքառամ.** — Քո հերն ուներ հրեղեն ձի, կայծակե թուր, կապա  
ու մեջքի քամոր: Հիմի նետ ու աղեղ ու եշ:

**Դավիր.** — Հրեղեն ձի, կայծակե թուր: Ասա, նանի ջան, վմբակե  
են զրանք:

**Անքառամ.** — Քո հրողբոր մոտ են: Հողեմ յես նրա զլուխը: Հա-

մա նա չի տա մինչեւ զու նրան պողպատ չըսնես:

**Դավիր.** — Կուզեմ: Թի խաթըով կտա՞ լավ, թի չե զոսով կառնեմ:

**Անքառամ.** — Ալի: Քո իրավունքն ե, բալա ջան:



**Դավիթ.**—(Մտախոհ, հոնքերը կիսած, աչքերը վառվում՝ ման  
և զալիս յեզ հանկարծ) Նանի՛, այ նանի՛:

**Ս. Երանամ.**—Էհը...

**Դավիթ.**—Նանի ջան, դու հեքիաթ պատմեցիր թե...

**Ս. Երանամ.**—Հեքիաթ չեր, Դավիթ ջան: Հեքիաթները հին հին  
աշխարհների բաներ են: Յես քեզ իմ տեսածն եմ պատ-  
մում, այ վորդի:

**Դավիթ.**—Նանի ջան, եղ քո սպիտակ մազերը վկա, վոր իմ հերը  
թաղավոր եր և իշխել եր ես սարերին:

**Ս. Երանամ.**—Ալեոր մազերս, աչքերիս լույսը, իմ հոգին վկա,  
բալա ջան, վոր յես հեքիաթ չպատմեցի, պատմեցի իմ  
որերի տեսածը:

**Դավիթ.**—Նանի ջան, ես և գնում եմ թորոս քեռու ու իմ ըն-  
կերտաց մոտ (Վճռական քայլերով գնում ե դուրս):

**Ս. Երանամ.**—(Փորձում ե կտրից հեռանալ, բայց Սառինիք դուրս  
ե զալիս):

**Սառինի.**—Քափթառ, սուտ սուտ բաներով ուզում ես կրամկ  
զցես, ի՞նչ ե:

**Ս. Երանամ.**—(Հետ զալով կտրի ծերից) Կրակ եմ զցելու, բայց  
Սուտը վարն ե: Սուտ ե, վոր ես հարստությունը Մհերինն  
ե: Ի՞նչ ես արաքվում:

**Սառինի.**—Ուզում ես զու ուտես: Հազը յես եստեղ եմ: Դու ի՞նչ  
շուն ես:

**Ս. Երանամ.**—Շանը մեծն ես: Պապիդ տանը քաղցած մորթի  
եյիր կրծում: Հիմի իշխանուհի դառնար:

**Սառինի.**—Իմ պապի տանը յեղ ու մեղք եր ծորում:

**Ս. Երանամ.**—Զե, ալմաստի ու յազութի հանք ուներ հերդու: Հո-  
ղեմ յես նրա զլուխը: Ուրիշների ցանքսերում քարհանք  
անելով հոգին զուրս եր գալիս: Յեղ ու մեղք, չե, հալած  
վոսկի...

**Սառինի.**—Դու ի՞նչի՞ յես արաքվում, քափթառ:

**Ս. Երանամ.**—Դու արաքվի: Ուզում եյիր խորոտ տղեն ծոցդ առ-  
նեյիր՝ չկարողացար, բնդ:

**Սառինի.**—(Գժվածի նման) Եւ համբերանք չմնաց: (Գետնից մի  
քար և վերցնում ու նետում Անթառամին) Հերիք յեղավ,  
քաղցած:

**Ս. Երանամ.**—(Բարը առնելով նետում ե Սառինին) Կշտացար,  
հա: Մերդ խալիք դռանը լվացք եր անում: Ուրիշն քաղ-  
ցած ես ասմէմ:

**Սառինի.**—Աղա Ոհանը գա, քո տունը վառել կտամ:

**Ս. Երանամ.**—Զը՛ռթ...

**Սառինի.**—Կտեսնես:

**Ս. Երանամ.**—Դավթի տեղ ենպիս մեկին պահի, վոր զոր ու գի-  
շեր ծոցիցդ դուրս չգա:

**Սառինի.**—(Քար քարի յետիվից նետում ե կտուքը՝ Անթառա-  
մին):

**Ս. Երանամ.**—(Բարկերը յետ նետելով) Բնդ. իշխանուհի և դառել  
մեր գլխին:

**Զենով Ռիան.**—(Ներս մտնելով հանդիպում ե հարայ-հրոցին)  
Ի՞նչ ե, Սարկոսի աղջիկ, ես ի՞նչ եմ տեսնում:

**Սառինի.**—Են քափթառը, են շունը:

**Զենով Ռիան.**—Ի՞նչ կա: Ի՞նչ ես ուղարկ խեղճ պառավից:

**Սառինի.**—Խեղճ պառավի, հա (Ելի քարեր ե նետում Անթառա-  
մին):

**Զենով Ռիան.**—Յերեսուն հինգ տարի յե նա մեզ հարկան ե:  
Ի՞նչ ե պատահել:

**Ս. Երանամ.**—Աղա Ոհան, ախը վժնց և սազում եղ կնիկը Մհերի  
տան:

**Զենով Ռիան.**—(Բոնելով Սառինին) Հանգստացիր: Ասա, ի՞նչ  
ե պատահել:

**Սառինի.**—Ի՞նչ վոր կար՝ Դավթին ասաց:

**Զենով Ռիան.**—Ի՞նչ կա, վոր ի՞նչ տաի:

**Սառինի.**—Ասում ե Զենով Ռիանի բոլոր հարստությունը Դավ-  
թին ե: Իրը թե մեր բոլոր ունեցածը Մհերինն ե յեղել:

**Ս. Երանամ.**—Սուտ ե:

**Զենով Ռիան.**—Թաղ տաի, ով ե իմ քյալիս Դպչողը:

**Սառինի.**—Ի՞նչու սուտ բան տաի:

**Զենով Ռիան.**—Թաղ տաի:

**Ս. Երանամ.**—Սուտ չեմ տակ: Մհերի բոլոր հարստության վրա  
նստեք ու նրա մեկ հատիկ վորդուն ել դուրս հանեք: Ասել  
եմ ու կասեմ (Գնում ե ներս):

**Զենով Ռիան.**—(Լուսթյունից հետո) Ախը ի՞նչու յես դու պիծկի  
րունը խառնկտում:

**Սառինի.**—(Բարկանալով) Զես հասկանում: Դու վոր Դավթին  
վանդեցիր, քափթառը դուրս յեկավ ու ամեն բան պատմեց:

**Դավթին.**—(Գնում ե զնաց թորոս քեռու մոտ:

**Զենով Ռիան.**—Թորոս քեռու... (մտահոգ) ծոերի թագավորն ե

**Թորոսը:** Մարկոսի աղջիկ, եղ չեղավ: Ծոերը դուրսը արդեն կրակ են փչու՞:

**Յանին.**—Ասաց, բան չթողեց ասաց: Ասաց, վոր Կողբաղինին տալիք խարջն ել, թե ժողովուրդը չտա, Մհերի գոնձիցն են տալու:

**Զենով Ոհան.**—Աղջիկ, եղ մեկը չեղավ: Դավթին վռնդելու չեյի: **Սառին.**—Բա ինչու եյի կովում:

**Զենով Ոհան.**—Կոփն ավելի վատ: Թորոսը բան իմանմա: Ինչեր եմ լուսւմ:

**Սառին.**—Թորոսը չի իմանմա՞մ:

**Զենով Ոհան.**—Իմանում ե՞, վոր Դավթին դուրս ենք արել տնից: Կողբաղինը թող գար զնար՝ ապա իմանար:

**Սառին.**—Դործը վոր եղան ես բռնում, յես ինչ անեմ:

**Զենով Ոհան.**—Անթառամ, Անթառամ, աղջի Անթառամ:

**Անթառամ.**—Դալիս ե կորի ծերին) Հը:

**Սառին.**—(Գնում ե ներս):

**Զենով Ոհան.**—Անթառամ, յերեսուն հինգ տարվա հարեաններ ենք: Աղջի, զու չամաչեցիր Դավթին եղ բաներն ասիր:

**Անթառամ.**—Ամաչելու Բնչ կա: Ալսր, աղա Ոհան, դու պետք ե ամաշես, վոր Առյուծի մեկ հաստիկ ժառանգին հերիք չե գելերին ու լապստրակներին խառնեցիր, հիմի ել անից

դուրս ես անում: Եղ արդ ու ամոթ ունեցող մարդու բան ե:

**Զենով Ոհան.**—Ալսր տեսած բան ե, վոր տան հարսի ջանին ձեռ տան:

**Անթառամ.**—Աղա Ոհան, յես ել կնիկ եմ: Յիս ել ջանել հարս եմ յեղել: Ո՞վ իմ ջանին ձեռ ե տվել: Հարսի ջանը վոր չուզի՞ ճանձն ինչ ե նրա վրա չի նստի, աղա Ոհան, իմացիր:

**Զենով Ոհան.**—Ի՞նչ ես ուզում ասել: Մարկոսի աղջիկն ե մեղավոր:

**Անթառամ.**—Բաս ինչ:

**Զենով Ոհան.**—Լոիր, թե չե լեզուդ արմատիցը կը պոկեմ հա...:

**Անթառամ.**—Աղա Ոհան, տեղդ ծանր նստի:

**Զենով Ոհան.**—Բա չես ամաչում:

**Անթառամ.**—Չե:

(Դրսից լսում են աղմուկներ: Ներս են մտնում) Թորոս, Դավթ, Աստ յիւ (Ալիս):

**Թորոս.**—(Մի բարդի ուսին) Ինչեր ենք լուսւմ: Ո՞վ ե Կողբա-

ղինին խարջ տվողը: Զենով Ոհան, ով ե քեզ իրավունք տվել հարկեր հավաքես ու լցնես Մարա Մելիքի բուռը:

**Սոռ.**—Մենք հարկ չենք տա:

**Զենով Ոհան.**—Ես հարկ տալու նոր բան չի խու: Ես շատ հին բան ե: Հարկ ե, պետք ե տալ: Ուզում են: Վանց պիտի անես չտաս: Թագավոր ե: Մենք ել հպատակ ենք:

**Թորոս.**—Մենք հպատակ չենք ուզում լինել հասկանում ես: Յիտ կանչիր եղ քո հարկահավաքներին թե չե...

**Զենով Ոհան.**—Զենդ, ձենդ:

**Դավթիք.**—(Անվարոր զոռոցով) Ո՞ւմ վոսկին ես տալի: Եդ քո հարստությունը չե, հասկացար:

**Զենով Ոհան.**—Դու ինչի յես զոռում, խոխա: Բա վոռ եդ հարստությունն իմը չե ումն ե:

**Դավթիք.**—Մերն ե: Դուրս բեր իմ հոր ձրն, կայծակե թուրը, կապան ու մեջքի քամարը:

**Զենով Ոհան.**—Ի՞նչ ես գլխիցդ զուրս տալի:

**Թորոս.**—Դավթիթը խոխա չե: Դուրս բեր Մհերի հարստությունը: Եդ հարստությունը ժողովրդինն ե:

**Զենով Ոհան.**—Ժողովրդինն ե, շատ բարի: Ժողովրդի գլխի համար ել տալիս ենք Մարա Մելիքի գեսպանին: Ել ինչ եք ուզում, տո:

**Ավիս.**—Ժողովուրդը չի ուզում տաք: Ժողովուրդն իրա գլուխը կազատի:

**Թորոս.**—Եդ ձեր գործը չե, թե ժողովուրդն ինչ կընի ինչ ըլքնի:

**Զենով Ոհան.**—Այ մարդ, զարերի որենքն եք ուզում քանդել ինչ ե:

**Թորոս.**—Հենց եդ ե: Դարերի որենքն ենք ուզում քանդել:

**Դավթիք.**—Դուրս բեր մեր հարստությունը: (Ներս են մտնում թումաս, Սուրո ու Մարատ):

**Թորոս.**—Զեկ ով իշխան կարգեց մեր գլխին:

**Զենով Ոհան.**—Ասոված:

**Ավիս.**—(Հեղիսական) Ասոված...

**Զենով Ոհան.**—Հիսի Աստո խոսքերին գեմ եք զնում:

**Ավիս.**—Ասոված վորն ե: Հեյ...

**Դավթիք.**—(Բոունցը բարձրացնում ե Սմբատի վրա) Այ Աստ վածը:

**Թումաս.**—Շատ տաշ գնացիք: Աստո խոսքը յերկնուց ե: Դուք չեք կարող դեմ զնալ:

**Թուրոս.** — Ի՞նչ ես վովում:

**Սուէն.** — Հիմի ես ի՞նչ զալմաղալ ե: Ի՞նչ եք ուզում:

**Թուրոս.** — Հարկ չենք տա:

**Սուէն.** — Կողբաղնին վ՞նց ճամրու կդնես:

**Թուրոս.** — Սորա Մելիքի գեսպանը վոր եկավ, մենք նրա հետ կխոսենք, հասկացնք:

**Սուէն.** — (Դառնալով ընկերներին) Թող խոսեն: Վերջը գլխները վոր վրա տան՝ մենք մեղավոր չենք:

**Դավիթ.** — Ո՞վ կարող ե մեր զիբներն ուտել:

**Սմբատ.** — Ալիք ես Դավիթը յերբ մարդ դառավ, չեմ հասկանում:

**Դավիթ.** — Դու յերբ մարդ դառար:

**Սմբատ.** — Յես մարդ ծնվել եմ, տո:

**Դավիթ.** — (Բոռնեցը բարձրացնում ե յեվ խփում ե Սմբատին):

**Զենով Ռիան.** — Այ Դավիթ, ի՞նչ ես անում: Յերեք հասկդ ունի:

**Թուրոս.** — (Բոռնելով Դավիթին) Սպասի, Դավիթ ջան:

**Սմբատ.** — Եկուց թագավորի մարդը կզա: Տեսնեմ վոր ծակը պետք ե մտնես:

**Թուրոս.** — (Մեջտեղ զալով) Սպասեցէք: Իրաւ հասկանանք: Եշուց կողբաղնը գալիս ե: Մինչև եփուց հարկերը վոր չը հավաքվեն, նրան վ՞նց ճանապարհ կդնենք: Ալիք ձեզ ով իրավունք տվեց, վոր մեր ուզարկած հարկահավաքներին բռնեք կապեք:

**Թուրոս.** — Ձեզ ով իրավունք տվեց հարկահավաքներ ուզարկեք:

**Սուէն.** — Թող եգուց իրանք պատասխան տան: Մենք մեր բաժինը կտանք: Ի՞նչու եք խոսքը յերկարում:

**Զենով Ռիան.** — (Զարացած) Մեր բաժինը վորն ե, տո: Բողոքի կողմից մենք ենք պատասխանատու: Ի՞նչ իրանք պատասխան տան:

**Սուէն.** — Ի՞նչ անենք:

**Զենով Ռիան.** — Նորից ուզարկեցէք նոր հարկահավաքներ: Ձուկեց սիրուն կանանց: Կատարենք Աստծո և թագավորի կամքը և ոգտակար լինենք ժողովրդին: Ժողովրդին, հասկանում եք:

**Դավիթ.** — (Սարսափելի չարացած բռնում ե ծեռը հասած առարկաներն ու շպտում ե դեն): Ես ե թագավորի Աստծո կամքը, հրողեր: Ես ե: Ես ե: Ես ե:

**Զենով Ռիան.** — Վ՞նց զժվեց, տո:

**Թուրոս.** — Մենք հիմի գնում ենք: Արեք, ի՞նչ վոր ուզում եք: Նոր

հարկահավաքներ ուզարկեցէք: Թագավորի դեսպան բերեք հստեղ: Ի՞նչ ուզում եք, արեք: Խոսքի կարճը — մենք ենք աշխատում ես հողի վրա, մենք պիտի ուտենք մեր աշխատանքի պտուղը: Հասկացնք:

**Զենով Ռիան.** — Ես ի՞նչ ծուր են, տո: Խնաք հասկացէք, խնաք:

**Թուրոս.** — Գնանք:

(Ծուրը բոլորը գնում են դուրս):

**Զենով Ռիան.** — (Լուսվյունից յեվ խոր մտածելուց հետո) Աւ զարկեցէք նոր հարկահավաքներ: Թող թակելով հավաքեն հարկը ժողովրդից: Ժողովրդի առաջ մենք ենք պատասխանատու:

**Սուէն.** — Ասում եմ թող իրանք պատասխան տան:

**Զենով Ռիան.** — Շատ մի խօսի: Արեք ի՞նչ, վոր հրամայում եմ:

**Սուէն.** — Ես բանը թանկ կնստի մեր վրա: Ասացի ու գնում եմ

(Դուրս):

**Զենով Ռիան.** — (Մենակ) Դարերի որենքն են ուզում փոխել: (Հեղնական) Լավ ե, ելի:

## Վ Ա Ր Ա Գ Ո Ւ Յ Յ Ր

## ՅԵՐԿՐՈՐԴ ՊԱՏԿԵՐ

Մի հին քարաշեն զանձատուն: Ներս են մտնում մի քանի հոգի ծեռներին բարձր բռնած սկուտեղներ, վորոնց վրա դրված են աղ ու հաց: Սրանք շարվում են բոլորակածել: Ապա մըտնում ե կողբաղինը սպասարկուներով: Կողբաղինի յետեվից մտնում են Ձենով Ռհան, Թոմաս, Սմբատ, Սուքո յեվ ուրիշ քաղցիներ:

**Չենով Ռիան.**—(Բանալիները ծեռին, խոնարհելով) Արքայից եկած, ահա մեր գանձը: Արքային ե պատկանում (Խոնարհվում ե):

**Բոլորը.**—(Խոնարհվում են):

**Թոմաս.**—Մեր կամքը Արքայի հաճույքն ե, տեր իմ:

**Սմբատ.**—Յերկրի վրա Արքայից բարձրը չկա:

**Չենով Ռիան.**—Առաջ Աստված, ապա արքայից արքան:

**Բոլորը.**—(Խոնարհվում են):

**Կողբաղին.**—Այն ի՞նչ ազմուկ եր, աղա Ռհան:

**Չենով Ռիան.**—Վոչինչ, տեր իմ: Ամեն ազգ և ամեն յերկր իր ծռերը կունենա: Վոչինչ, տեր իմ:

**Կողբաղին.**—Ի՞նչ եյին ուզում:

**Չենով Ռիան.**—Վոչինչ, տեր իմ, մեր անխելքներն են:

**Կողբաղին.**—Ամիելք: Ի՞նչ եյին բռում:

**Թոմաս.**—Կարծում եյին, տեր իմ, վոր աւրիշ թագավորի դես պան ե յեկել:

**Կողբաղին.**—Հետո՞:

**Թոմաս.**—Ուրիշ թագավորի դեսպան կարծելով ուզում եյին խարջը չտան, տեր իմ:

**Կողբաղին.**—Ժողովրդին լուր չեր արվել թե գալիս ե Մորտ Մելքի գեսպանը:

**Չենով Ռիան.**—Ծուերը երեկ քաղքում չեյին, տեր իմ, չեյին իւմանում:

**Կողբաղին.**—Հա: Այդպես: Թէ չե՞ ուզում եյի բարկանամ:

**Բոլորը.**—(Խոնարհվելով) ՏԵՐ իմ:

**Չենով Ռիան.**—Մորտ Մելքի հետո մենք ես ժողովրդի ու յերկրի տերն ենք: Մենք կպատժենք նրանց: Ազաշում ենք անհիշաչար լինել:

**Կողբաղին.**—Այդպես: Գետք և պատժել դրանց: Յեթե գուք չեք կարող, յես կանեմ:

**Սուբե.**—Պատիժների ամենազաժանն արգեն գործադրվել ե: Աղաշում ենք հանգիստ լինել:

**Կողբաղին.**—Բոլոր հարկերը հավաքված են ժողովրդից:

**Չենով Ռիան.**—Հավաքված են, տեր իմ: Ժողովուրդը հաճույքով ե տալիս:

**Կողբաղին.**—Ապա ինչու եյին բռում, վոր թակելով են հավաքված հարկերը, հը:

**Չենով Ռիան.**—Ժողովուրդ ե, տեր իմ: Հասկացողն ել կա, չը հասկացողն ել:

**Կողբաղին.**—Զհասկացողները բնձ կհանձնեք, հասկացաք:

**Բոլորը.**—(Խոնարհվում են):

**Կողբաղին.**—Զոկեցիք սիրուն աղջիկներին ու հարսներին:

**Չենով Ռիան.**—Այն, տեր իմ (խոնարհվում ե): Հիմի հստեղ կը բերվին:

**Կողբաղին.**—Հա, յես պետք ե ջոկեմ տանելուց առաջ: Արքային եմ տանում, իմացաք:

**Բոլորը.**—(Խոնարհվում են):

**Չենով Ռիան.**—Մենք գիտենք, վոր մեր աղջիկերն ու հարսներն ավելի հարուստ տեղ են գնում, Արքայից յեկած:

**Կողբաղին.**—Ավելի հարուստ տեղ ամպ: Արքայական պալատ են գընում:

**Թոմաս.**—(Խոնարհվելով) ՏԵՐ իմ:

**Սմբատ.**—Իմ երկու աղջիկերն ել մեջներն են, տեր իմ:

**Կողբաղին.**—Ազրիս, հավատարիմ ծառա: Այդ ծառայությունը չի վրիպի արքայի ուշադրությունից:

**Սմբատ.**—(Խորը խոնարհվում ե): Ներս են քշվում սիրուն աղջիկները ու հարսները, վորոնք լալիս են ու աղաղակում:

**Չենով Ռիան.**—Ես կողմը, ես կողմը (ցույց տալով խորքի դուռը): Ի՞նչ եք լաց լինում, թագավորի սարայ եք գնում:

**Աղջիկները.**—Անիծվեք գուրք:

**Կողբագին.**—Մեր սարայում ձեր մազերը արարական յուղերով  
պետք ե ոծենք:

**Հարսներ.**—Անիծվէք, չորանաք դուք (լաց ու շիվան):  
**Չենով Ոհան.**—Ներս քշեցեք սրանց:

(Քաղցցիք սկսում են նրանց ներս քշել):

**Կողբագին.**—Սպասեցեք: Հատ հատ թող անցնեն իմ առաջից:  
Յսա պետք ե տեսնեմ նրանց:

(Լացով ու կոծով աղջիկներն ու հարսները մեկ մեկ անց  
են կենում Կողբաղինի առաջից):

Հա, լավն են: Այս մեկն արքային շատ պետք ե դուք գտա:  
Այս յերկուսին դուրս հանեցեք (յերկուսին հանում են  
դուրս, վորոնք զնում են ուրախացած). Լավն են, շատ  
լավն են: (Մմբատի յերկու աղջիկները իրար ծեռք բռնած  
անց կենալիս չոքում են Մմբատի առաջ):

**Մմբատի աղջիկները.**—Հայրիկ, աղաչում ենք, աղատիր մեզ:

**Մմբատ.**—Լացեք, անզգամներ: Թագավորին եմ տալիս ձեզ:

**Աղջիկները.**—Աղախին կդառնանք: Սարայ չենք գնա:

**Մմբատ.**—(Լացակամած յերեսը շուր և տալիս):

**Չենով Ոհան.**—Գնացեք, գնացեք: Թագավորի մոտ եք զնում:

**Կողբագին.**—Թագավորը ձեզ շատ կտիրե:  
(Աղջիկները լացով հետեւում են մյուսներին):

**Չենով Ոհան.**—(Բանալիով կողպում և խորի դուռը):

**Կողբագին.**—Լավ եք ջոկել: Ո՞վ ե ջոկել:

**Բոլորը.**—(Խոնարհում են):

**Կողբագին.**—Ապրեք, հավատարիմ ծառաներ: Այս բոլորը կպատ-  
մեմ արքային: Թող հանգիստ ու խաղաղ ապրի Սասմա  
աշխարքը:

**Չենով Ոհան.**—Մեր ուզածը խաղաղություն ե, տեր իմ:

**Կողբագին.**—Այս բոլորից հետո կինի խաղաղություն:

**Թումաս.**—Մեր ուզածն ել եղ ե. ես աշխարքում մի քանի որ  
ունենք ապրելու: Կատարենք արքայի կամքը և կգնանք  
կատարելու Աստծո կամքը:

**Կողբագին.**—Հիմա վոսկին չափենք:

**Չենով Ոհան.**—Ասան արքային, վոր իրանն են մեր վոսկիներն  
ու կնանիքը, մեր ամբարների ցորենն ու մեր կանանց  
վզից կախված մարգարիտները:

**Թումաս.**—Ու մեր սիրուն աղջկերքը:

**Սուլք յեվ Մմբատ.**—(Միաբերան) Եղակն ի: Արքայի եսիրն ենք  
մենք:

**Կողբագին.**—(Սկսում ե չափել վոսկին յեվ դատարկելով սպա-  
սարկուների բռնած պարկերի մեջ) Աղջիկներին ու հարս-  
